բանը — վորքան նշխող պիտի լիներ բանվորության մեջ

առհասարակ, բանվոր յերիտասարդության մեջ՝ մասնավորապես:

Աշխատանքի պաշտպանության բացակայության պատճառով բանվորությունը տալիս է հսկայական դոհեր, հաշմանդամներ: Բժգչական ոգնության մասին գաղափար կազմելու համար բավական է հիշատակել, վոր նույնիսկ 1910—12 թվականներին Շահալի Ելիսար հանքերում աշխատող 125 բանվորներին և նրանց ընտանիքներին տարեկան միջին հաշվով հատկացվել ե 75 ռ. բժշկական ոգնություն վորն որական անում և 20 կ. (իսկ ինչ կլինիկ գրությունն 800-ական թվականներին): 1905 թվին գումարված Զանգեղություններից պարզունաբերողների համագումարի արձանագրություններից պարզվում է, վոր 1905—06 թ. նախահաշվով Դաթարանը բժիշկ բուժակ, պոստ և պրիստավ պահելու համար հատկացվել ե 35.465 ռ., սակայն ամբողջ տարվա ընթացքում հարմար բժիշկ չի ճարպվել — մինչդեռ վարչությունն այդ գումարների հաշվին կրկնապատճել ե պըթառավերի և ստրաժնիկների թիվը:

Գյուղացիական յերիտասարդությունը, սրա սահման չ-է
քաշ վիճակում ապրող պյուղացիության հարազատ սերունդն
ե, զոր կուլ եր գնում ստրկական կարգերին, գալարգում
վաշխառուական կապիտալի, մեծ ու փոքր հողատերերի
ճիրաններում որն ի բուն քրտինք թափում, հաճախ ուրիշ-
ների համար աշխատում, ծախում իր բանվորական ուժը,
քերթել տալիս իր կաշին, թուք ու մուրով մի կտոր հաց
աշխատում, իր խավար որը մթնացնում:

Այս պայմաններում են ահա ծավալվում 1965 թվականի մայիսի 1-ի ընթացքում, վորոնք իրենց արտահայտությունն են գտնում պաքերը, վորոնք իրենց բանվորական շարժումը վոտքի յե մեր յերկրամասում: Բանվորական կազմակերպությունները սոց.-դեմոկրատական կազմակերպությունները առաջնային պարտ է աշխատանքում են, գուրս գալիս նեղ ինտելի-ւափորվելով՝ աշխատանքում են, գուրս գալիս նեղ ինտելի-ւանտական ըջաններից և ընդգրկում ափելի լայն խավեր: Այսատահայտող սոց.-դեմոկրատաները, վորոնք առա-ելապես բոյլեսիկներ են, իրենց աշխատանքների ծան-ության կենտրոնը փոխադրում են արհեստակցական միու-

1905—06 թվականներին հայաստանն ապրում է իր բան վրական գործադուների առաջին շրջանը: Կործադուկ հայտարարում Սլեքպոլի դեպոն, յերկաթուղարիծը, Ալլահ-վերդու գործարանը և առանձին համբարություններ: Անշուշտ, ծայր առած գործադուլային շարժմանը մասնակցում ե և բանվոր յերիտասարդությունը: Սյապես, որինակ, 1906 թվին Երևանում գործադուկ են հայտարարում հյուսների և առաջադագործների աշակերտներն ու քարգահները: Նրանք պահանջում են նորմալ բանվորական որ, ոսմիկի և աշխատավարձի հավելում 20%-ով, քաղաքավարի վերաբեր- մունք խալելինների կողմից և այլն: Հայաստանի յերիտա- սարդ բանվորության առաջին գործադուլը պսակվում ե հա- ջողությամբ, տերերն ամբողջովին բարգարարում են նրանց պահանջները: Այնուհետև նոյն թվի սեպտեմբերին գործա- դուկ են հայտարարում փականադործների ու դարբինների քարգահները, սակայն այստեղ հաղթանակը ննում և տե- րերի կողմը Գործադուլավորները 10 որ ննում են առանց նյութական ոգնության և ստիպված են լինում վերսկսել աշխատանքը նախկին պայմաններով:

Գործադուկ են անում և Յերևանի մի շարք համբարու- թյուններ ու Սառաջեկի կոնյակի գործարանի բանվորները: Մեզ չի հաջողվել պարզեցնել թե այդ գործադուլավորների վ՞որ մասն և կազմել յերիտասարդ բանվորությունը, կամ թե Ի՞նչ չափով և մասնակցել նա գործադուներին. իսկ վոր մբողջ բանվորության հետ միասին գործադուներին մաս- ակցել ե և բանվոր յերիտասարդությունը, և վոր այդ-

պիսին յեղել և առհասարակ, դրանում յերկու կարծիք լինել չի կարող: Ապացույց կարող ենք համարել այն հանգամանքը, վոր Յերեանում տեղի ունեցած Սառաջելի ուստի ֆիկացիոն և կրնյակի գործարանի բանվորության 3-րդ գործադրութը, վորը սոց.-գեմ. ղեկավարությամբ ավարտվեց հաջող, բավարարած պայմանների 11-րդ կետում հիշատակություն կա այն մասին, վոր «զինվորական ծառայության կանչվելու դեպքում տրվում և բանվորին նրա յերեք ամսվա ուռճիկը և հասանելիք պարզեց», Այստեղից պարզվում է, վոր գործադրութավորների մեջ յեղել են յերիտաքանվորներ, վոր նրանք մասնակցել են գործադրութին, առաջադրել իրենց ուրույն պահանջները:

Աւրոյն պահանջմանը՝
Բանվոր յերիտասարդությունը մասնակցում է և Ալահ-
վերդու պղնձահանքների 1905—06 թ. գործադուլերին։
Առաջին գործադուլը տեղի յե ունենում 1905 թ. նոյեմբե-
րին, սակայն քիչ անց, խարված բանվորությունն այս ան-
գամ արդեն սոց.-դեմ. անմիջական մասնակցությամբ ու-
ղեկավարությամբ նորից վորքի յե կանգնում։ Գործա-
դուլը տեսում է յերկու ամիս, բանվորները վոչ մի զիջումի
չեն համաձայնվում և գործարանի վարչությունը փորձում է
բանվորներին բռնի միջոցներով արտաքսել Ալլահվերդու
շրջանից։ Զինված մի ջոկատ շրջապատում է Ալլահվերդու
հանգերը և գրավում Մանսեսի բարձունքները, սակայն բան-
վորները չեն ընկճպում։ Սյնուհետեւ մտրակի ու սվինների
ուժով պարսիկ բանվորներին վոչխարի նման քշում են
ապրանքատար վագոնները և ուղարկում պարսկական
սահման։

Այս գործադուլի առթիվ Բողչալուի սոց.-գեմ. բոյշկիկ-
յան կազմակերպությունը հրապարակել եր Ալլահվերդի-Մա-
նես և Շամիլու պղնձաձուլական գործարանների բանվորու-
թյան տնտեսական պահանջները, վորոնց մեջ ի միջի այլոց
մի կետ վերաբերվում ե բանվոր յերիտասարդության։ Այդ
կետը ճետկյալն ե. «Վեց ժամվա բանվորական որ յերեխա-
ների համար, վոչնչացնելով փողքաթային աշխատանքը»։
«Ենթեխաները պետք ե ստանան որական 60 կոպեկից վոչ

պակաս, իսկ հասակավոր բանվորները նույն աշխատանքում,
վորտեղ յերեխաներն են՝ 1. ռ. 20 կ. վոչ պակաս»:^{*}

Բանվորական շարժման ծաղման այս շրջանը յերկալ
չի տեսում: Վրա յեն հասնում ունակցիայի դաժան որերը:
Մի գործ, վորից անմասն չեն մնում դաշնակցության
կոմիտեները:^{**} Նրանք՝ ձեռք ձեռքի տված ցարական ժան-
դարմերիային, ճնշում են բանվորական ցոյցերը, ցրում
միստական խմբակները մասսմը լուծվում են, մասսմը նո-
րից անցնում ինքնապարփակման ըլջան, զաղվում ինքնա-
դարդացմամբ—ներքին խնդիրներով, վորպեսզի պատերազմի
բջիջները, Այդ ըլջանում յերիտասարդության կազմակեր-
պումը դառնում և անհատական մի գործ, առանձին սոց-
դեմոկրատներ, գյուղ վերադարձ բանվորներ ունակցիայի
սոցանում այս ու այն տեղ փորձեր են կատարում կազմա-

* 1926—27 թվին ինչ վոր մեկը իր ծանոթի մէջոցով թիֆիսից
պատմական վավերազերի մի կապոց և ուղարկել թերեան, հեղափոխա-
կան թանգարանին ծախելու նպատակով: Այդ կապոցն ընկալ մեր ձեռքը,
վորի մէջն եր նաև Բորչալուի կազմակերպության հիշալ կոչու: Մենք ար-
տագրել ենք դժբախտարար միայն մեջ բերած կետը, հավատացած մինե-
լով, վոր կապոցը կդնի: Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ տեղի
չունեցավ, և մինչեւ որս ել մենք չունենք այդ պահանջների թիվ ցանկը,
վորի քանակն առասպեկտական չափերի յի հասցվում, Երականում նա
դժվար թե անցներ 20-ից: Կոչը տպած եր սոց-դեմ. Բորչալուի կազ-
մակերպության սեփական ապարանում, նեղ թղթի վրա, ուսւերեն եղ-
վով, իսկ թե ինչ վախճան ունեցավ հիշալ կապոցը և կորտեղ և զըտ-

** Անհետաքրքիր չե այդ տեսակետից 1904 թվի Ալեքսովի տնային
ծառայողների և ձիթողոց գործարանի բանվորների գործադուլիք որին
նակը: Գործարանի բակում հավաքվում են գործադուլավորները, Մի-
տինդիք բացումից քի անց, կառով գալիս են դաշնակցական իւլիթ Զալ-
լաթը և ուրիշներն իրենց զինուրներով, շարդում գործադուլավորների
գործիքները և ցրում միախնդր, Պրիստավ Խերխելիձեն, հղիացած Զալլաթի
քաջագործությամբ, անզուսպ բացականչում ե. «Մոլոց Ջալլաթ, սո-
մի կազակն բազմություն»: («Զորու տարի...», էջ 123):

կերպելու մարքսիստական խմբակներ, խորացնում են դժգո-
հությունները, հեղափոխական պլոպագանդ մղում:

Յեվ այսպես, առաջին հեղափոխության շրջանում բան-
վոր յերիտասարդության շարժումն ամբողջապես և լիովին
կապված ե հասակավոր սերնդի պայքարը: Յերիտասա-
կական բանվորական մասսայական շարժում այժմյան հաս-
դարձողությամբ գոյություն չուներ — իսկ ինքնուրույն շարժ-
կան մասին խոսք լինել չեր կարող: Բանվորական առաջին
շրջաններում յերիտասարդությունը, վորպես նրա բաղկա-
շրջաններում յերիտասարդությունը, մասնակցում և գործադուլին—տեղ-տեղ առա-
ցուցիչ տարրը, մասնակցում և գործադուլին—տեղ-տեղ առա-
ցադրելով իր տնտեսական պահանջները, մերթ հաղթանակ
տանելով, մերթ պարտություն կրելով:

Առանձին յերիտասարդուներ, յեթե մասնակցել են քա-
քաքական գործնեյության, մասնակցել են վորպես ՌՍԴԲԿ-ի
դաշտական կազմակերպություն յե-
անդամներ: Քաղաքական պառանձին կազմակերպություն յե-
րիտասարդության համար գոյություն չի ունեցել: Բանվոր
յերիտասարդության ծայր աստիճան յետամասցությունը,
յերիտասարդության ծայր այլև մասնակցելը — այլև հեղափոխական աշխա-
կյանքի գմնդակ պայմանները — այլև լին տվել: Այս
տանքի ընդհանուր միջավայրը այդ թույլ չեն տվել: Այս
հարցում խոշոր նշանակություն ուներ նաև այն հանգա-
մանքը, վոր աշխատանքի գաղտնի պայմաններում կու-
սակցությանն անհրաժեշտ եր ուժերի խիստ կենտրոնա-
ցում և բնականաբար նա չեր կարող թույլ տալ կազմակեր-
պություններին ավելորդ ճյուղավորություն:

Դրան գուգընթաց մենք տեսանք, վոր կուսակցությանը
հատուկ ողնություն են ցույց տվել աշակերտական սոց-
դեմ. կազմակերպությունները, վորոնք փաստորեն ձուլված
են յեղել ՌՍԴԲ կազմակերպության հետ, յենթարկվել են
դեկավար մի կենտրոնի, տարել ամեն տեսակի կազմակերպ-
ութեական չուլտուրական, քաղաքական-պլոպագանդիստական
չական-կուլտուրական, բարգարական բարգմապիսի հանձնա-
շխատանք, կատարել տեխնիկական բարգմապիսի տարի-
քարությունները: Սակայն վրա հասնող ուսակցիայի տարի-
ներին, յեր կործանվում ե սոց-դեմ. կազմակերպությունը,
յեր արյան մեջ լինդգվում են բանվորական շարժման առա-
յի հումկու-ալիքները, աշակերտական սոց-դեմ. խմբակ-

Ներն ել հեղափոխության այդ ընդհանուր տեղափության
որեղին կծկվում են, հեռանում քաղաքական առողջայից:
Մեր յերկրամասում իշխողը նորից մնում է նացիոնալիզմը,
աշակերտական դաշնակցական միությունները, վորոնք հե-
ղափոխության պարտության մեջ, սոց-դեմ. կազմակերպու-
թյան կործանման մեջ եյին փնտրում իրենց հաղթանակը՝ հզորացման յելակետը:

„ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՈՒՍԱՆՈՂ ՄԱՐՔՍԻՍՆԵՐԻ ՄԻՈՒ-
ԹՅՈՒՆ“-ԻՑ ԴԵՊԻ „ՍՊԱՐՏԱԿ“

Պատերազմի տարիներին Անդրկովկասի աշակերտական
մարքսիստական խմբակները բեկման շրջանն են ապրում
իրենց զարգացման ընթացքում։ Ժամանակակից հասարա-
կական-տնտեսական պայմանները նպաստավոր հող են հան-
դիսանում մարքսիստական խմբակների ստեղծման ու գործ-
նելության համար։ Քանի գնում, կենդանանում և աշխու-
ժանում են մարքսիստական խմբակների աշխատանքները,
հետզիետե փորձեր են արվում տարբեր վայրերում դործող
զանազան խմբակների միջև կապ ստեղծելու, նրանց համար
դեկավար կենտրոն կազմակերպելու ուղղությամբ։ Կամաց-
կամաց մարքսիստական խմբակները դուրս են գալիս իրենց
աշակերտական պատյանից և մասնակցում հեղափոխության
դործնական պայքարին։

Այդ պահուն խմբակներ կային Անդրկովկասի համարյա-
բոլոր քաղաքներում: 1915 թ. Պետական դռմայի անդամ
Զ. Լոմտատիձեյի թաղման ժամանակ զանազան վայրերից
Թիֆլիս ժամանած մարքսիստական ներկայացուցիչները
խորհրդակցում են գոյություն ունեցող բոլոր խմբակները
մի կազմակերպության մեջ ընդգրկելու մասին,
Յեկատինա հետո այս պահապարաստական:

Յանձնող բոլոր խմբակները
Յեզ ընդգրկելու մասին,
Յեզ ահա, նախապատրաստական վրոշ աշխատանք կա-
տարելոց հետո, — 1916 թ. վերջին հաջողվում և Քութա-
յիսում գումարել Անդրկովկասի յերիտասարդական մարք-
սիստական խմբակների առաջին անկեզալ կոնֆերանսը,

Նախքան կոնֆերանսը բոլոր խմբակներում տեղի յեն ունեցած ընտրությունները, ըստ նորմայի: Կոնֆերանսը, վորին մասնակցում են 10—12 հոգի, աշխատում ե յերկու-յերեք որ, մշակում ե միության ծրագիրն ու կանոնադրությունը, ընտրում կոմիտե, հաստատում միության անունը — «Անդրականական մարզական մարզական միություն»: Այդ կոնֆերանսին Հայաստանից մասնակցում ե ըսկ. Անաստաս Միքոյանը, վորը գործուղված եր Վաղարշապատի մարզական կան խմբակեց (այդ մասին հետո):

կան խմբակեց (այդ մասին հետո):
Կոնֆերանսին մասնակցում են թե բոյլէսիկները և թե
մենչևիկները, վորոնք ըստ ամենայնի, թե միության մեջ
և թե կոնֆերանսում մեծամասնություն են կազմում: Այդ
յերեսում և ճենց նրանից, վոր կոնֆերանսն ինչ-ինչ պատ-
ճառներով չի քննել պատերազմի խնդիրը և հայտնաբերել
իր գերաբերմունքը դեպի այն, մի խնդիր, վոր պատե-
րազմի տարիներին անտեսել չիր կաբելի և միությունը հա-
մարելով «սովորող մարզսիստների» կազմակերպություն,
միանգամայն մոռացության և տվել բանվոր յերիտասար-
դությանը:

Ուսանող յերիտասարդության մարքսիստական կազմակերպության գեմքի հայտաբերման և ինքնորոշման տեսակետից հետաքրքիր և 1917 թ. մարտին Թիֆլիսում գումարված այդ միության 2-րդ կոնֆերանսը, վորբն մասնակցում ելին Թիֆլիսի, Բագրի, Փոթիի, Խոնֆի, Խաշուրիի և Եջմիածնի ներկայացուցիչները, թվով 10 հոգի։ Կոնֆերանսի սկզբից աննշան պատրվակով դահլիճից հեռանում են Քութայիսի յերկու պատգամավորները և այդպիսով կոնֆերանսի կազմում մնում են մի բոյլէկի։

Կոստանդնուպոլիս մեծամասնությունը ունենալով, սօսակից կոնֆերանսում մեծամասնությունը ունենալով, սօսակից ները ցուցահանութեան իրենց իսկական դեմքը (8 ձայնով ընդդեմ 1-ի), ընդունում հետեւյալ բանաձևեր.

«Գանելով, վոր ժամանակակից հեղափոխության շամսակցում և և բուրժուազիան, վորպես հեղափոխության շարժիչ ուժերից մեկը, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում բանվոր դասակարգին գործակցել բուրժուա-

զիայի հետ մինչև դեմոկրատական հանրապետությունը, ըստ փորում պրոլետարիատը միշտ պետք է վերահսկի բորժուազիային»*:

Սովորական մենշեկիյան մի փաստաթուղթ. Այդպիսով, Անդրկովկասի ուսանող մարքսիստների միությունը ձևավորում է վորպես մենշեկիյան կազմակերպություն, փորն ընդհանուր հայ աշակերտության հետ միասին կուրս է վերցնում ամրապնդելու բորժուական պետությունը, հաստատ պահելու պարլամենտական կարգերը:

Բնական է, փոր այդ միության մեջ բոյլշեկիների և մենշեկիների կենակցությունն այլևս հանդուրժել չեր կարելի, մանավանդ՝ յերբ 1917 թ. հունիսան դեպքերից հետո իսպառ վերանում էն միասնական աշխատանքի բոլոր կարելիությունները. Ուսանող մարքսիստների միության բոյլշեկիյան մասը վերջնականապես անջատվում է կազմակերպությունից, պարզում հեղափոխության և ինտերնացիոնալիզմի դրոշը — կորի հայտարարում թե բորժուազիային և նրան սպասավորող կուսակցություններին, մտնում բանվոր յերիտասարդության մասսաների մեջ, ձեռնամուխ լինում նրանց մարտական շարքերի կոփման:

Անդրկովկասյան ուսանող մարքսիստների միության հաջորդ կոնֆերանսը հրավիրվում է 1918 թ. հունվարին, այս անգամ արդեն առանց բոյլշեկիների, Նրան մասնակցում է միայն Վրաստանի պատգամավորությունը, թեև նա չեր զլանում կրել «Յերիտասարդ մարքսիստների Անդրկովկասյան կոնֆերանս» անունը: Կոնֆերանսը ներկա մոմենտի առթիվ ընդունում է հետեւյալ բանաձեռք.

«Ուսուաստանի արտադրական ուժերի չաճած լինելու հետեւանքով — պրոլետարիատն առայժմս չի կարող փոչնչացնել կապիտալիստական հասարակակարգը և կազմակերպել սոցիալիստական արտադրություն»: Սոցիալիս-

* Г. Девдариани: „У истоков Комсомола Грузии“, № 21—22
1927 թ. Թիֆլիս:

տական հեղափոխության նախաձեռնությունը կարող ե վերցնել միայն Արևմտյան Յեկարպայի պրոլետարիատը*:

Այդպիսով, յերիտասարդ մարքսիստները վերջնականապես խզում են իրենց կապերը հեղափոխության հետ — անվերադրձությունում մենշեկիզմի հականեղափոխական դիրքերը:

Մինչ այդ ընկ. Միկոյանի և ուղիշների նախաձեռնությամբ 1917 թ. սեպտեմբերի 3-ին Թիֆլիսում հրավիրվում է տարերային կերպով առաջ յեկած և կուսակցության կուտարելային գործող բոյլշեկիմիտեների անմիջական ղեկավարությամբ գործող բոյլշեկիմիտեների (հիմադիր) ժողովը՝ յան յերիտասարդական խմբակների (հիմադիր) ժողովը՝ Այդ ժողովը, փորին մասնակցում եյին մոտ 60—100 հոգի — Այդ ժողովը, միանալ մի կազմակերպության մեջ և կազմակերպություն և միանալ մասնակցում եյին մասնակիցները: Կերպությունն անվանել «Յերիտասարդ սոցիալիստինտեր» նացիոնալիստների «Սպարտակ» կազմակերպություն:

Ժողովը հաստատում է միության կանոնադրությունը և կասի վողջ աշխատավորությանը:

Սպարտակն իր առաջին յելույթով բարձրացնում է ինտերնացիոնալիզմի դրոշը և կատաղի անհաջող պայքար հայտարարում նացիոնալիզմին: Այդ այն շրջանն եր, յերբ Անդրկովկասում կազմակերպվում եյին Ազգային խորհուրդներն ու առաջին ազգային գորամասերը, յերբ սաղմնավորվում ու առաջին ազգային գորամասերը, յերեք «անկախ» հանրապետյին Անդրկովկասի հետագա յերեք «անկախ» հանրապետությունները, փորով բորժուազիան ձգտում եր Անդրկովկասն արհեստականորեն կարել ուսուական հեղափոխությունը — նրա հաղթական ընթացքից***:

* Նույն տեղում, եջ 27:

** Այդ այն որերին եր, յերբ ուսուական ցարական բանակը լքել եր գովածնակացական քրոնը, և յ ը դաշնակցության ղեկավարությամբ Կովկասի աշակերտական միությունը ւապարասակարգային անկուսակցական կամ աշակերտական միությունը կազմակերպում ճական ուղարդակի տակ կամավորական խմբեր եր կազմակերպում ճական ուղարդակի լեռու համար: Յևկ Սպարտակի կոչն իրոք, փոր այդ պահուն Անդրկովկասը նացիոնալիզմի թունոտ յերկանականարում մի լուսատա աստղ, մարտական մի դրոշ, փորի շուրջը պիտի համախմբվելին նրանք բարեր, փորությ հեղափոխական եյին, փորոնք կոչված եյին պարագերը ընդգեմ նացիոնալիզմի հանուն հեղափոխության հաղթանակի:

Սկզբից և թ նշելով բոլոր ազգերի աշխատավորության շահերի միատեսակությունը, Սպարտակը կոչ ե անում նրանց ինտերնացիոնալիստական մի ուժեղ կազմակերպություն ստեղծել անհաջող դասակարգային պայքար մղելու համար բոլոր ազգերի հարստահարիչների դեմ, ամեն տեսակի հականակութականների դեմ:

«Հուրժուադիան, — ասվում ե կոչի մեջ, — հեղափոխությունը խեղդելու նպատակով ոգտում ե բնակչության ազգային խայտարղետությունից, նա կամենում ե ջատել պրոլետարիատի ուժերը, ձգտելով մասսաներին ազգային շրջանակների մեջ դնել՝ միացնելով նրանց այսպես կոչվող համազգային, ապադասակարգային պլատֆորմի վրա»

...Այդպիսի հակաժողովրդական, դավաճանական աշխատանքի համար լավագույն հող ե հանդիսանալում կովկասյան իրականությունը, վորտեղ ցարական ռեժիմի տեղական աջակիցները — կապիտալիստները և կալվածաբերերը — Նիկոլայի չինովակների և գեներալների ոգնությամբ խորացրել են ազգային ներհակությունն ու փոխադարձ ատելությունը»:

Մերկացնելով վրացական միջկուսակցական խորհրդի և ճայկական համազգային խորհրդի հականեղափոխական եյտությունը, Սպարտակը կոչ ե անում «Ազգային միություններին և դասակարգային զինադադարին հակադրել բոլոր աշխատավորների ինտերնացիոնալ միությունը և նրանց կատարի պայքարն ընդունել հականեղափոխական դասակարգի»:

«Սպարտակ կազմակերպությունը կոչ ե անում բոլոր յերիտասարդ ինտերնացիոնալիստներին և բոլոր այն աշխատավորներին, վորոնց համար թանգ ե հեղափոխության և ինտերնացիոնալի շահերը, դուրս գալ իրենց բողոքներով ընդդեմ վրացական միջկուսակցական խորհրդի և հայկական համազգային խորհրդակցության, Սպարտակ կազմակերպությունը կոչ ե անում ձեզ ազգային միություններին և դասակարգային զինադա-

դարին հակադրել բոլոր աշխատավորների ինտերնացիոնալ միությունը և դաժան դասակարգային պայքարն ընդդեմ հականեղափոխական ունեցել դաշտի վայրին»:

Ընկերներ, մեղ հետ միասին անողոք պայքար հայ- լինկերներ, մեղ հետ միասին անողոք պայքար հայ- լարարեցեք նացիոնալիզմին և շովինիզմին, վորը տվյալ տարարեցեք միջազգային միջազգային պարտականությունը և միջկուսակցական խորհրդի հայկական համազգային խորհրդակցության ստեղծման մեջ»:

Կորչեն կապիտալիստաների և կալվածատերերի հակա- նեղափոխական դասակարգերը:

Կեցցեք բոլոր յերկրների աշխատավորության միջազ- գային համերաշխատությունը:

Կեցցեք ոռուական հեղափոխությունը»:

Սակայն այդ շրջանում Սպարտակը դեռևս միտրարը չեր կազմով: Վերջնականական անջատված լինելով յերի- տասարդ մարքսիստներից, այնուամենայնիվ նա իր շարքե- րում տեղ ե տալիս թե և եսերներին և թե անարխիստներին, վորոնք (թվով 5—6 հոգի՝ 90-ից) կազմակերպության մեջ մենչ է հինչեւ 1919 թվի սկզբները՝ մինչև Սպարտակի մեռում են մինչեւ 1919 թվի սկզբները՝ մինչև Սպարտակի վերանվանումը: Այդ առթիվ ահա թե ինչ և ասում ընկեր- ի, Զնելաձեն՝ Սպարտակի հիմնադիրներից մեկը՝ իր հիշու- դություններում»:

«Կազմակերպությունը մենք այսպես եյինք պատկե- րացնում: Նրան տալիս եյինք զուտ դաստիարակչական նշանակություն, նա պետք ե աշխատավոր յերիտասար- դությանը դաստիարակեր կոմունիստական վոգովի: Բայց դեռ միասին մենք համաձայն ենք յեղել կազմա- դրա հետ միասին մեջ ընդունել և նրանց, վորոնք ընդունում կերպության մեջ ընդունել և նրանց, վորոնք ընդունում են խորհրդագյին սիստեմը: Ուստի և մեղ մտա մտնելու իրավունք եյինք տալիս նաև ձախ եսերներին»*:

1918 թ. վերջներին սկսվում ե հայ-վրացական պատե- րազմը: Կիսալեզակ պայքարաններում աշխատող սակավազոր Սպարտակն իր բուռն բողոքն ե հայտնում ազգամիջան այդ պատերազմի առթիվ, պատրաստում ե համապատասխան

* «Էկիթեմ անցյալը» (Ժողովածու), եջ 24, 1928 թ.

մի կոչ, սակայն թերթերից վոչ մեկը չի համաձայնվուա
տպագրելը: Այդ որերին յերիտասարդ կազմակերպությունը
բռնում և իր առաջին քաղաքական քննությունը, վոչ մի
տատանում ու վարանում չի նկատվում կազմակերպության
վոչ հայկական և վոչ ել վրացական մասի մեջ, յերկուսն ել
բոյլշերիկան համարձակությամբ դատապարտում եյին յեղ-
բայրասպան այդ պատերազմը և դիտում այդ վորպես իշխող
բուրժուական կառավարությունների իմպերիալիստական և
ուղմատենչ քաղաքականության առում:

1919 թ. մարտի վերջերին հրավիրվում ե Թիֆլիսի կազմակերպության համագույղադաշտին կոնֆերանսը, վորը և վորոշում ե յերիտասարդ սոցիալիստ ինտերնացիոնալիստների Սպարտակ կազմակերպությունը վերանվանել Յերիտասարդ Կոմունիստների Սպարտակ կազմակերպություն, ընդունում ե միության նոր կանոնադրությունը, վորով կազմակերպության անդամ հաշվում ե նա, ով առանց վերապահումների ընդունում ե կոմկուսի ծրագիրը և իդեալան դեկալարությունը (զրանով իսկ լուծվում ե ձախ եսերների և սնարիխատների հարցը): Նոյյն թվի՝ «Ապրիլի մեռժելու» օրը

միտելի պաշտության մեջ կովկասյան Յեղիշին կո-
միտելի առաջարկությամբ (համաքաղաքային կոնֆե-
րանսում ընտրված) «Թիֆլիսի կոմիտեն վերանվանվուա-
կ Յերիտասարդ կոմունիստների Սպարտակ կազմակերպ-
պությունների ժամանակավոր կենտրոն և Թիֆլիսի կո-
միտե և նորից նրա առաջարկությամբ ընկերներ են
ուղարկվուա արդեն գոյություն ունեցող կազմակերպու-
թյունները կապի (հրահանգավորման) համար:
... Ըստերներ են ու

* Г. Девдариани, «Очерки истории комсомола Грузии», Заккнига, 28 г. Тифлис. № 112, Կոմիտեի վերածվելը ապրիլի վերջերին չեղող տեղի ունենալ, գործիքներ ապրիլի ամենառեց կեսերին (յեթև զույգ շեղի ունենալ) — հրատարակել են դեկտեմբերի Կոչը, գործ մի քիչ վե-

Վերանվանված կոմիտեն ապրիլի սկզբներին չորս լեզու
ներով հրատարակում եղելլարատիվ մի կոչ, վորտեղ նշում և
իր նպատակը, գերն ու անելիքները պրոլետարական հեղա-
փոխության մեջ, Դրանով իսկ Սպարտակ կազմակերպու-
թյունը վերջնականապես ու անվերադարձորեն ինքնորոշ-
վում է — իր պայքարը դիտելով վորպես բանվոր դասա-
կարգի ընդհանուր պայքարի անբաժան մի մաս, նա իր
բախտը կապում երանվոր դասակարգի հետ, պրոլետարա-
կան հեղափոխության հետ և յուրաքանչյուր քայլափոխում
նվիրագործում իր գեկավար այդ սկզբունքը՝ նկատի ունե-
նալով այդ կոչի պատմական բացառիկ նշանակությունը և
կարևորությունը — հետագայում կանդրադառնանք դրան-
մենք ամբողջապես մեջ ևնք բերում այդ կոչը:

ՅԵՐԻՑԱՍԱՐԴ ԿՈՄՈՒՆԻՍՏՏՆԵՐԻ «ՍՊԱՐՏԱԿ» ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացեք.

ԴԵԿԼԱՐԱՑԻՎ, ԿՈԶ

Պրոլետար դասակարգը կազմում և ժամանակակից աղա-
տարար շարժման այն հզոր սաղմը, վորը ծնվելով կապի-
տալիստական հասարակության մեջ, պիտի կործանի այդ
հասարակակարգը, վորապես ստրկության ու մի բռնըն
պարագաների շահագործության փլատակների վրա կա-
ռուցի իր աշխարհը — կոմունիզմի աշխարհը:

Ժամանակակից հասարակության բոլոր դասակարգերը
մեջ միակ հեղափոխական դասակարգը՝ զուրկ ու տնանկա-
պըոլետարիատն ե, վորի հեղափոխական վոգին պայմանա-

ըսպիտակած ձեռվ տպագրվել և Յերևանում 1919 թ. մայիսի 1-ին լույս
տեսած «Սպարտակ» թիգթամբ «Ծրագրի փոխարքն» վերտառությամբ (իսկ
«Սպարտակի» հրատարակմանը, ըստ Գ. Ղարաջանի վկայության, ձեռնա-
մուխ և յեղել մայիսի մեկից մոտ յերկու շաբաթ առաջ). դեկտեմբերի
կոչք արտապայման և Թիգթիսի կ կենտրոնի կոչից, պարզ ե, որ ապրիլի
կոչք արտապայման չեր կարող ապրիլի սկզբներին գեկ-
վերջներին վերանվանված կոմիտեն չեր կարող ապրիլի սկզբներին գեկ-
լարատիվ կոչք հրատարակել:

վորվում ե վոչ թե ժամանակավոր հեղափոխական բռնկում-
ներով, այլ նրա տնտեսական դրությամբ:

Այդ դասակարգը մինելով բոլոր հասարակական բարիք-
ների ու հարստությունների մեակ արտադրողը, միկնույն
ժամանակ հարկադրված ե բավականանալ իր աշխատանք-
ների բոլոր արդյունքների մինիմումով, խղճուկ մնացորդ-
ներով և ամբողջովին շահագործվում ե ուներ դասակարգի
իշխանությունից:

Զգտելով ազատազրվել քաղաքական և տնտեսական
սոլրկացման ծանր լծից, պլոյետար լասակարգը միաժամա-
նակ ձգտում ե վոչնչացնել մարդու շահագործումը մար-
դով, վորի հիմքը կազմում ե մասնավոր սեփականու-
թյունը — մարդկության այդ առաջին չարիքը:

Ազատազրվելով դասակարգային շահագործումից՝ հեղա-
փոխական պրոլետարիատը հենց զրանով ել ազատազրում ե
մարդկությունը կապիտալիզմի ու ճիրաններից և իմպերիա-
լիզմի համաշխարհային մարդակերությունից:

Զգտելով իր վերջնական նպատակին՝ կոմունիզմին,
վճռական կովի պատրաստվելով համաշխարհային իմպերիա-
լիզմի ու նրա հավատարիմ վարձկանների՝ սոցիալ-դավա-
ճանների դեմ համաշխարհային պլոյետարիատի գիտակց-
մասը յերես և թեքում սոցիալ-շովինիստներից, կազմակերպ-
վում ե միակ իսկական պրոլետարական կուսակցության —
կոմունիստական կուսակցության շուրջը, վորպեսզի դասա-
կարգային մաքով հակադրվելով մյուս ըուր դասակարգե-
րին՝ իր հղոր մարտական կազմակերպությամբ վճռական
կովի դուրս զա միջազգային կազմակերպված իմպերիա-
լիզմի դեմ:

Իիովին գիտակցելով ներկա պատմական մոմենտի նշա-
նակությունը, յերբ ոռուսական Մեծ հեղափոխությունն իր
հզոր ըներն ե տարածել Գերմանիա, Ավստրիա, Հունգարիա,
Երբ համայն աշխարհը բռնկվում ե կոմունիստական հեղա-
փոխության հրով և յերբ ամենուրեք ամբապնդվում ե պրո-
յեն մեր կազմակերպությունը, Յերիտասարդ կոմունիստ-

ների «Սպարտակ» կազմակերպությունը, կոչ ե անում
հեղափոխական յերիտասարդությանը, այն յերիտասարդու-
թյանը, վորը դուրս ե յեկել պրոլետար և կիսապրոլետար
թյանը, վորը դուրս ե յեկել պրոլետար և կազմակերպության
մասսաների գրկից, համախմբվել մեր կազմակերպության
շուրջը, դաստիարակվելու հեղափոխական մարքսիզմի ու
շուրջը, դաստիարակվելու վոգով, կազմակերպելու այն
մարտական ինստրումենտի վոգով, կազմակերպելու այս
անսպառ աղբյուրը, վորտեղից պետք ե լրացվեն մեր ավագ
կազմակերպության — կոմունիստական կուսակցության շար-
կերը, վորը հաճախակի նորանում ե միջազգային իմպե-
րիալիզմի դեմ մղվող անհավասար կովում:

Մեր կազմակերպությունը, Յերիտասարդ կոմունիստ-
ների «Սպարտակ» կազմակերպությունը սերտորեն կապ-
ված ամբողջ աշխարհի մուս նույնանման կազմակերպու-
թյունների հետ՝ հանդես ե գալիս դասակարգային ակտիվ
թյուններով և սերտ մասնակցություն ցույց տալիս իմ-
լոգունքներով և սերտ մասնակցություն ցույց տալիս իմ-
պերիալիզմի բրոնզե բռունցքը փշրելու, ձգտում լուսավոր
ապագալի, նոր աշխարհի — կոմունիզմի:

Կեցցե՛ք ազատաքացիական կոփվը՝ դեպի կոմունիզմ տանող
ճշմարիտ ճանապարհը:

Կեցցե՛ք համաշխարհային կոմունիստական հանրապե-
տությունը:

Կեցցե՛ք պլոյետար յերիտասարդության գաղափարների
միակ ու իսկական արտահայտիչ — Յերիտասարդ կոմունիստ-

ների «Սպարտակ» կազմակերպությունը»:

Յերիտասարդ կոմունիստների
«Սպարտակ» կազմակերպությանը
թյան ժամանակավոր կենտ-
րոնական և թիֆլիսի քաղա-
քային կոմիտե:

ՊԱՏԵՐԵԶՄԻ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Մարքսիստական խմբակներին չայաստանում կրկին
հանդիպում ենք 1916 թ. վերջերին: Առաջին հերթին հիշա-
տակության արժանի յե Եջմիածնի Գևորգյան ճեմարանի I
լուսարանին կից 1916 — 17 ուս. տարվա սկզբներին կազմա-

վում ե ճեմարանական ներքին խնդիրներով ու մարզսիստական գրականության ուսումնասիրությամբ, վորի համաշոգագործում ե Ներսիսյան անտառը: Բարձր դասարանականի աշակերտների մեջ խմբակը պրոպագանդ եր մղում անհատական կցման միջոցը—լսարանում դասառու դաշնակցական Վ. Նավասարդյանի ժամերին կարծիքների ջերմքաղիսում եր տեղի ունենում խմբակի անդամների և դասաւոսի միջնորդ:

Դպրոցական կյանքին մասնակցություն ունենալն արտահայտվել է նրանով, վոր խմբակի աղիտացիայի հետեւ վանքով հաջողվում է ամբողջ աշակերտության հետ միասին — վերացնել առավոտյան և յերեկոյան աղոթքը և ուսանողությանը շաբաթ յերեկոները վաճառ տանելը։ Ճեմարանի հոգեոր պատերի ներսում կատարված այդ կորրեկտիվը քիչ բան չեր իր ժամանակին:

Փետրվարյան հեղափոխությունից հետո խմբակը գուրս
ե գալիս ճեմարանի պատերից և բացատրական խոշոր աշ-
խատանք կատարում տաձկական գրոնդից Եջմիածին հան-
գոտանալու յեկած մոտ 5 հազար հոգուց բաղկացած զորա-
բանակի մեջ՝ Պրովակացիայի յենթարկված զինվորները
գիշերով հարձակվում են զինու պահեստների վրա զավթելու
և խմելու նպատակով: Խմբակն իր ամբողջ կազմով անցնում
ե աշխատանքի և հաջողվում ե վերտականգնել հեղափոխա-
կան կարգը զորքի մեջ: Այդ գեղաքի շուրջը զաշնակցա-
կանները լուրեր են տարածում, վոր իբր ակաը կազմա-
կերպված ե վրացի զինվորների կողմից տեղական հայ բնակ-

Հության դեմ: Դաշնակցականները և ճեմարանի ղեկավար ները վորոշում են՝ զինել ուսանողությանը վրացիների հարձակմանն ընդդիմագրելու համար: Խմբակը տեղեկանաց լով այդ մասին, ընկ. Միկոյանի և ուրիշ յերկու ընկերոջ հաջողվում և ներկա գոռնվել ուսուցչական խառը ժողովին համոզել, վորպեսզի նրանք յետ մնան այդ արկածախին: Հոսուցները դրությունից, վոր գուր տեղը պետք է ալյուն հոսուցներ:

Խմբակն անմիջական կապ և պահպանում Խթվլուռը
հրատարակվող սոց-դեմոկրատիայի միացյալ որգան «Պայ-
քար» թերթի հետ մի կողմից և Անդրկովկասյան մարքսիստ
աշխատանքների միության հետ մյուս կողմից, Խմբակի ջան-
քերով «Պայքար»-ը տարածվում է վոչ միայն ճեմարանի
ներսում, այլև Վաղարշապատի մեջ։ Անգամ ճեմարանի
ընթերցարանը դուրս է գրում 6 որինակ։ «Պայքար»-ին
թղթակցում են և խմբակի անդամները*։ 1916 թ. Քութա-
յիսում գումարված Անդրկովկասյան մարքսիստ աշխատա-
ների միության առաջին կոնֆերանսին Գևորգյան ճեմա-
րանի խմբակի կողմից մասնակցում է ընկ. Ա. Միկոյանը։

Ղարաբաղը 1916 թ. վերջին եսեր Սուրեն
Մարկոսյանի նախաձեռնությամբ կամակերպվում ե անկու-
սակցական յերիտասարդական միություն, վորը շուտով,
փետրվարյան հեղափոխությունից հետո փաստորեն վեր ե
ածվում ինտերֆրակցիոն մի կազմակերպության, Միության
ներսում գործող Փրակցիաները բանվորական, գյուղացիա-
կան և զինվորական խորհուրդների ընտրության ժամանակ-
միասնական ուժերով պայքարում են գաշնակցության գեմ
և խորհրդի կազմում անցկացնում Անիկելին, Միությունը
հսկայական կուլտուրալուսավորական աշխատանք ե տա-

* 2. Դասարանի ցուցմունքները, Յերիտապատի արթիվ

Նույն թե քաղաքում և թե գավառում կազմակերպում ե
որինակիլի գրադարան-ընթերցարան և հասարակական լայն
ժողովներում պարբերաբար դնում և քննում զանազան
կուսակցությունների ծրագրերը: Վարչության կազմում այդ
ժամանակ կար միայն մի հոգի՝ իրեն բոլցների համարող
վերգուշ Միխիթարյանը: Մինչև սահմանադիր ժողովի ընտ-
րությունը բոյլշեիւյան ֆրակուխային հաջողվում և գրավել
մոտ 30-ի չափ համակրողներ իրենց բոլցների համարողների
շարքում հարելի յե թվել Վ. Միխիթարյանին, Վաղինակ
Մովովյանին, Սերյոժա Ազատյանին:

Սյդ Ընկերութերը նորից կապված եյին թիգիսի զՊայքարութիւնում դանվող զինվորական մասերի սոց-դեմոկրատական կազմակերպության հետ, բացի այդ անձնական կապեր են ունեցել ընկեր Ա. Մառվյանի հետ: 1917 թ. ամառը Ղարաքիլիսա յեն գալիս նաև բոյլշևիկ Անուշավան Վարդանյանը և ուրիշները: Դեռևս հուլիսաւան սկսած՝

Դեռևս հումանական է ուրիշները։
Միտության բոյզեկի համարվող ընկերները — ընկ. Մուսավ-
յանի, Ա. Վարդանյանի և զինվորական կազմակերպության
միջոցով տեղեկանում են, վոր «Պայքար» պետք և բա-
ժանվի։ Դեռևս հումանական դեմքերից առաջ խմբակի նյու-
թական յեկամուտն սկսում են բաժանել ըստ ֆրակցիաների,
իսկ հումանական դեմքերից հետո միության ներսում նոր
ընտրություն և կատարվում և այս անգամ բայցեկիներից
անցնում են բյուրոյի մեջ յերկու հոգի՝ Վ. Միթթարյան,
Վ. Մուսավյան։ Հետագայում սահմանադիր ժողովի ընտրու-
թյան ժամանակ բոյզեկիներն արդեն դուրս են գալիս մեն-
մենակ և շահում ընդամենը 37 ձայն (!)։ Այնուամենայնիվ
անկուսակցական միությունը շարունակում է իր անվանա-
կան գոյությունը, չնայած նրան, վոր միակ ուժեղ ֆրակ-
ցիան բոյզեկիներն եր։

Եւ օ թ. Ճանապարհները փակվում են: Ղարաքիլխայի
բոյլեկիների առաջ խնդիր և դրվում էնքորանի վրայով
կապվել բոյլեկիների հետ: Այդ առթիվ հրավիրվում և
միտոթյան ժողով և առաջարկվում կամ աշխատել զաշնակ-

շական պետության ոգալին, կամ թե կապվել բոյլենէլէ
ների հետ: Դաշնակցականները վրա յեն տալիս, ընկեր-
ներին ծեծելով դուրս անում և ժողովը փակում: Հայ
վրացական պատերազմի ժամանակ, վորապես բողոքի նշան,
միության բոյլենիկյան կոչվող Փրակցիան յերկու անդամ
ժողով և հրավիրում են կանչելով դաշնակցական ներկայա-
ցուցիչներին, նրանցից հաշիվ են պահանջում հայ-վրացական
պատերազմը վարելու առթիվ: Յերկու ժողովն են փակվում և
միւնիցիյի միջոցով խոկ ղեկավարներին մի քանի որ կա-
լանքի տակ պահելուց հետո ազատ են արձակում, նախո-
րոք ստորագրություն առնելով, վոր պետք են «խելոք մնան»:

1919 թ. միության վարչությունը պաշտոնական գործությունը մեծամասնությունը վում ե, զորի մեջ բոլցենիկներն արդեն մեծամասնությունը են կազմում, վարչության մեջ անցնում են Վ. Միհթարյան, Վ. Մոռոսյան և Վ. Թորոսյան Նախագահի պաշտոնում մում և Ս. Մարկոսյանը: Միության գրադարան-ընթերցարանը վեր և ածվում էքսպերտիցիայի: Թիֆլիսից հատուկ ցրիչի միջոցով (այդ ցրիչը շոփեր Յեղիշն ե, զոր այժմս ել կոմունիստ և աշխատում է Յերևանում) ստացվող թերթի համար կանոնադրությունը, կոչերն ու թուրքիկները գրադարանը, գրականությունը, կոչերն ու թուրքիկները գրադարան-ընթերցարանի միջոցով ցրում են գավառում, ուղարք կում Դիլիջան և այլուր, սույնիսկ մինչև Սարեկամիշ:

Գործելով անկուսակցական միտոթյան բոյլը որպէս
գործելով անկուսակցական միտոթյան բոյլը որպէս
անկցիայում, վերջինիս անդամները միաժամանակ հան-
սանում են Դարաքիլիսայի բոյլը և կազմակերպու-
յան անդամներ, մասնակցում կուսակցության ներքին
շխատանքներին, կատարում տեխնիկական զանազան
անձնարարություններ, այլև ակտիվ աջակցում գաղտնի և
գործներության:

Անկուսակցական միության բոյլշենիկ ըստիրոսոս ազգութ
շնչառում են նաև 1920 թ. մայիսյան օրերին, գորքը, մի-
ցիան, բանվորությունը բոյլշենիկների կողմն եր, պատ-
աստ եր ձերբակալման յենթակա անձանց ցուցակը, սա-
յյն մի շաբաթ պատճառներով ապստամբության ժամկետը
գծելով, Դարաքիլսան չի կարողանում ժամանակին փար-

վել Սէհքպղում ծածանվող ապստամբական դրոշն, և
ուսակցիային հաջողութեամ և զգմել կղզիացած ամբողջ շար-
ժումը: Մայիսյան ապստամբությունից հետո կազմակեր-
պությունը ցրվում է, նրա մի մասը բանտ և լցվում, վո-
մաճք աքսորվում են, վոմաճք փախուստի դիմում և կոմու-
նիստական կազմակերպությունը Ղարաքիլսայում կրկին
հանդիս և գալիս Հայաստանի խորհրդայմադման ընկերության
Ղարաքիլսայի անհետացած առաջնորդությունը:

Ղարաքիլխասյի անկուսակցական յերթմիությունը մինչև
վերջն ել պահպանում ե իր ինտերֆրակցիոն բնույթը:
Տակտիկական նկատառությունը՝

Սպարտակ միություններով բոյլզիկյան ֆրակցիան
վոր 1919 թ. սկզբներին Յերևանից ստացվում ե համա-
պատասխան կարգադրություն։ Ֆրակցիան նպատակահար-
մար ե համարում շարունակել իր աշխատանքն անկուսակ-
ցական միության մեջ, սակայն յեռանդուն կազմակերպում
ե կայարանի յերիտրանվորությանը և արհեստագոր աշա-
կերտությանը — նրանց մեջ կուլտուրական և քաղաքական
բացատրական աշխատանք ծավալում։

Վոչ անկուսակցական յերիտմիությունը և վոչ ել նրա
մարքսիստական՝ հետագայում բոյլենիկյան ֆրակցիան կապ
չեն ունեցել վոչ մարքսիստ աշակերտների Անդրկովկասյան
միության հետ և վոչ ել մարքսիստական աշակերտներէ
Ենթականի կոմիտեյի հետ*:

Ալեքսանդր Պավլովիչ հետ*, մարգսիստական յերիտա-
սարդական խմբակ առաջին անգամ կազմակերպվում է
1918 թ., տաճկական դորքերի հեռանալուց հետո Խմբակը
աղջմակերպվում է մի քանի ընկերների նախաձեռնու-
թամբ, վորոնց թվում կարելի յե հիշել Ընկերներ՝ Հանե-
ողյան, Ա. Ղազարյան, Հ. Մելիք-Սարգսյան (վախճան-
ած), Խաչիկ Ռանջանյան, Աղասի Մովսիսյան և ուրիշները:
Ի կարճաւու գոյության ընթացքում խմբակը հսկայական
թծ է կատարում. նա հետագայում փաստորեն հանդիսա-
ւմ է Ենինականի կոմունիստական կազմակերպության
լափոխական մարզված կորիզը, վորոն ստեղծվում է մարգ-
* Վերգուշ Մինիթարյանի ցուցունքները, Յերիտապատի արխիվ:

սիստական խմբակի աշխատանքի շնորհիվ: Բանն այն ե,
վոր խմբակը քայլայվելով, նրա անդամները պարապ չեն
նստում: Նրանցից յուրաքանչյուրը մի աշխատանք ե կա-
տարում: Ուշի-ուշով հետեւելով՝ դաշնակցության գահավիժ-
վող ընթացքին և պետական «Հինարարությանը», խմբակի
անդամները մասսաների մեջ մերկացնում են դաշնակցու-
թյան հականեղափոխական եյությունը, նրա արարքները,
կոմունիստական սերմեր ցանում մասսաների մեջ*:

ՅԵՐԵՎԱՆԻ ՄԱՐՔՍԻՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՐԱԿԱՆ ՅԱՀԱՆԱԿ ՅԱՀԱՆԱԿ ՅԱՀԱՆԱԿ ՅԱՀԱՆԱԿ ՅԱՀԱՆԱԿ ՅԱՀԱՆԱԿ

Փետրվարյան հեղափոխությունից հետո դաշնակցականը ձեռնամուկս ելինում յերիտասարդության կազմակերպմանն էնա աշակերտությանը ըստ ազգությունների կազմակերպելու ջատագովները ծերեանում հրավիրվում են աշակերտական բազմամարդ ժողով, վորտեղ պ. Սահակ Թոռոյանը (հանրապետական Հայաստանի մինիստր) յերեք ժամ գեկուցում են դաշնակցության ծրագրի մասին: Թեպետ Թոռոյանը յեղբափակման մեջ հայտարարում են, վոր ցյել գեղագում ձեզ դաշնակցական դարձնել յիս գեմ եմ աշակերտական կուսակցության կազմակերպման», այնուամենայնիվ դա չի խանգարում, վորպեսզի ժողովի վերջում մի դաշնակցականներ փորձեյին դաշնակցական աշխուումը դաշնակցականներ կազմել: Հակադաշնակցական տրակերտական միությունն կազմել: Աշակերտական աշխայանը, Դուկաս Դուկասյանը, Ալ. Խասնակյանը, Վ. Խերանյանը, Դուկաս Դուկասյանը, Ալ. Խասնակյանը, Վ. Խերանյանը և ուրիշները ազմուկ են բարձրացնում, թե չի կարելի անկուսակցականների ժողովները կուսակցական նաև տակաների ծառայեցնել:

ՂԱՆԵՐԻ ԺԱՌԱՋԵՑՆԵՐԻ
«Բավական ե, պարոն Թորոսյան և նմաններ, — գրում
ե ընկ. Խանջյանը 1917 թ. ապրիլի 15-ին, — կերպեք ձեր

* Թ. Խաչիկողյան, «Կոմունուլը Լենինականում», Յերիտպատի արթուր

դիմակները և հրապարակ իջեք ձեր իսկական գույնով:
Սակայն ուրախալի յեր ասել, վոր հայ աշակերտու-
թյան մեջ կան նաև գիտակից անհատներ, վորոնք չեն
վեճերվում թորոսյանների բառախաղերով և չեն բռնված
աթոռներ գրավելու մարմաջով:

Յեվ յես հավատում եմ, վոր հայ աշակերտությունը
մտիկ ապագայում զիտակցության գալով, կճանաչի
կից և կդնա այս ճանապարհով, վոր տանում և դեպի
բոլոր ազգերի համագործակցությունն ու յեղբայրու-
թյունը: («Նոր սերունդ» № 2, 1917 թ. Թիֆլիս):

տություն և կրում, կազմակերպվում և ընդհանուր աշակեր-
տական միությունը, ընտրվում Յերեանի Կոմիտե: Թիֆլիսի
միութենականներն անհանդատանում են: Սիմոն Մատոյա-
նին ներկայացուցիչ են ուղարկում Յերեան, վորը Թիմական
դպրոցի աշակերտության ընդհանուր ժողովում զեկուցում և
միության նպատակների մասին և պահանջում և, վորպեսզի
թիմականի աշակերտությունը մտնի ընդհանուր հայ աշա-
կերտական միության մեջ: Ընկերները ներկայացուցիչ դեմ
այստեղ ել յելոյշի են սարքում: «Առանձնապես ուժեղ հար-
ձակում գործեց ընկ. Աղասի Խանջյանը, վորի խոսքից հետո
թյանը միանալու առաջարկը, վորը և տապալվեց: Ներկա-
յացուցիչը փորչփոշման յետ վերադարձավ»: (Վ. Ծովյան,
«Ապարատակի եջերից», «Ավանգարդ», № 33, 1926 թ.):

Մարքսիստորեն տրամադրված աշակերտությունն անց-
նում և ինքնակազմակերպման: Միությունն ընտրում է իր
վարչությունը, վորը կոչվում և մարքսիստ աշակերտների
միության Յերեանի կոմիտե: Վարչության մեջ մտնում են
ընկ. Հուկաս Հովկասյան, Աղասի Խանջյան, Աղավա-
րի Ծովյան, Վ. Ծովյան և մեկ ուրիշը: Դիմում են ընկ.
Արշավիր Մելիքյանին, վոր աշակերտության համար մի
քանի դասախոսություններ կարդա մարքսիզմի սկզբունք-
ների մասին: Նա համաձայնվում է ուրախությամբ և սկսում

ե դասախոսությունների շարքը: «1917 թ. սեպտեմբեր ամսի
առաջին կիրակին եր, — ասում ե ընկ. Արշավիր Մելիք-
յանը, — գնացի մարքսիստական աշակերտության անդրա-
նիկ ժողովը, վորը կազմակերպվել եր Հուկաս Հովկասյանի
նախաձեռնությամբ «Союз городов»-ի (այժմյան գավործ-
նախաձեռնություն) շենքում: Ներկա եյին 30—40 հոգի: Դասախոսու-
կոմի շենքում: Ներկա եյին 30—40 հոգի: Դասախոսությունը
թյունների թեմաներն եյին՝ պատմական մատերիալիզմ,
կուսակցության պատմություն: Այդ դասախոսությունները
կուսակցության պատմություն: Այդ դասախոսությունները
սում են յերեք ամիս: մինչև դեկտեմբերի 15—20-ը խո-
տեսամի տոն որերին ցերեկը և դրանց նախորդ յերեկո-
սում ելի տոն որերին ցերեկ ժամանակից յերեք ժամի մի
ները — յերկուսից յերեք ժամ: Հուկասը նպատակ ուներ մի
վորոշ ժամանակից հետո, յերբ հաճախողների վորոշ կայուն
կազմ կստեղծվեր, կազմակերպվել «մարքսիստ աշակերտների
միություն»: (Ա. Մելիքյանի վկայությունները, եջ 1):

1918 թ. սկզբներին միությունը գուրս գալով աշակեր-
տական շրջանակից, կազմակերպում և յերեք հրապարակա-
տական դիմությունը: «Պատերազմը և հեղափոխու-
յին դասախոսությունները» այսախոսությունները մեծ հաջո-
պահությունը նյութի շուրջը: Դասախոսությունները մեծ հաջո-
պահություն են գտնում Յերեանում: այդ որերին դահլիճը
դություն են գտնում Յերեանում: Զեկուցումներից հետո տեղի յեր-
եկալեցուն եր լինում: Զեկուցումներից հետո տեղի յեր-
եկալեցուն մտքերի փոխանակություն, վորտեղ դասախոս
ընկ. Արշավիր Մելիքյանն անողոք դատավետում եր իր
ընդդիմախոսներին:

Այդ դասախոսություններն անախորժ տպավորություն
են թողնում դաշնակցական շրջանների վրա, և ահա նրան-
ցից մեկի առթիվ լրագրական տեղեկատույթի վերջում հոդ-
վածագիրը գրում ե, թե «պիտի ըսենք, վոր նման դասա-
խոսությունների ժամանակը չե և չպետք ե ալ թույլա-
տրվի՝ առանց այն ել մեր պղտորած մթնոլորտը խառնել
նման հեղափոխությունների մեջ» («Զինվոր», № 14, 1918 թ.,
Յերեան): Իսկ «Պատերազմ» նյութի մասին կարդացած
դասախոսության առթիվ «Ռւնկնդիր» ստորագրությամբ
մինը «Զանգ» թերթի № 13-ում հայտնում ե, վոր «Վերջում
արգեն, յերբ դասախոսն սկսեց պատասխանել իր ընդդի-
մախոսներին, դասախոսությունը միտինզի վերածվեց, այն

ել մի միտինգի, ուր բոյլեհիկին և հնարավորություն ետքում արտահայտվելու (այսպիսով դեմոկրատական Հայաստանում բոյլեհիկներն որենքից դուրս եյին համարվում է «միտինգ»-ում բոյլեհիկ Մելիքյանի հանգես զայն ոտարութիւնը եր համարվում: Մեր «սոցիալիստներիս» «Ունկնդրին» չափազանց ջղայնացնում և մանավանդ այն հանգամանքը, վոր «Ա. Մելիքյանը սիրում և իր բոլոր հակառակորդներին հիմարության աստիճան տգետ գուրս բերել»:

Այդ դասախոսություններն ոգտագործում եր բոյլեհիկյան նպատակների համար միաժամանակ հեղինակությունն և մասսայականությունն ձեռք բերելու մարքսիստ աշակերտների միությունը, չհաշված նյութական յեկամուտը, վորն այն ժամանակ պակաս կարուրություն չուներ:

Յերևանի սոց.-դեմոկրատական կազմակերպության պատումից հետո միությունն անցնում է ծրագրված աշխատանքի: Յեկ ահա 1918 թ. վերջերին կոմունիստական որդան «Խոսք» թերթում կարդում ենք հետեւյալ հայտարարությունը՝

«Մարքսիստական աշակերտ. միություն. — Մարքսիստական աշակերտական միությունը կազմակերպում և դասախոսությունների մի շարք: Հետեւել ցանկացող աշակերտաշակերտուհիներին հրավիրում ենք հայտնել այդ մասին կոմունիստական կուսակցության բյուրոյում: Աստաֆյան № 13, ամեն որ յերեկոյան ժամը 5-ից 6-ը: ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ («Խոսք», № 6, 1918 թ., Երևան):

«Ծանրության կենտրոնը փոխադրվում և դասախական բնագավառը: Կազմակերպվում և վոչ միայն միության անդամների, այլև համակիր աշակերտաների համար ուժքերատներ, զեկուցումներ, մեծ մասսամբ թերթիական խնդիրների, յերբեմն նաև ընթացիկ մոմենտի հարցերի շուրջը: Հիշում եմ, վոր այդպիսի ուժքերատներ կարգացին

միության մոտ 7-8 անդամներ և այդ ուժքերատներում ջում մտան միության մեջ:

Միության անդամների մեծագույն տոկոսը մասնակցում եր կուսակցական աշխատանքներին, լինում եր կուսակցական ընդհանուր ժողովներում և մի յերկուսն ել մտնում են կուսակցության Յերեանի կոմիտեյի կազմի մեջ: Կուսակցության բոլոր սև աշխատանքները — զանազան դասախոսությունների համար դահլիճ վերցնել ամսագան պատրաստել և կացնել պատրաստելու ժամանակակից ամսամբ միության խել և այլն — կատարում եյին մեծ մասամբ միության անդամները»: («Ավանդաբարգ», № 33, 1926 թ.):

Պետք ե ասել, վոր մինչ այդ սոցիալ-դեմոկրատական յերկու քրակցիաներն ել գործում եյին միասին: Ընտրում եյին միացյալ կոմիտե: Միասնական ուժերով հրատարակում եյին սոց.-դեմոկրատական «Կայծ» որգանը: Սակայն այս գրությունը յերկար չի տևում: Ընդամենը մի յերկու համար գրադարակելուց հետո «Կայծ»-ը վորոշակիրեն կանգնում է հրատարակելուց վրա, վորը և անխուսափելի յե մենշեկյան տեսակետների վրա, վորը և անխուսափելի յե գարձնում պառակտումը: 1918 թ. աշնանից բոյլեհիկները գերանում են կազմակերպությունից, ստեղծում իրենց որդեռանում և կազմակերպությունից, իսկ քիչ անց՝ նոյեմբերին հլմադրում գանը («Խոսք»), իսկ քիչ անց՝ կենաց կայծ» և միաժամանակ կոմունիստական կազմակերպության Յերեանի կենտրոնական կառավագանքը կոմիտե: («Խոսք» № 7, 1918 թ., Երևան):

Կան կոմիտե: («Խոսք» № 7, 1918 թ., Երևան): Նույն ժամանակներում կազմակերպում եւ և Յերևանի գիմազիային կից Ա. Խասհակյանի ղեկավարությամբ գործակիցիային կից Ա. Խասհակյանի ղեկավարության Յերեանի կենտրոնական կառավագանքը միությունների միավոր շուրջ կուսակցության կոմիտեյի հետ և վոչ ել կայս կապ շուրջներ վոչ կուսակցության կոմիտեյի հետ: Խմբակի հարցը մարքսիստ աշակերտաների միության հետ: Խմբակի լուծվում եւ, զրվում ե կոմիտեյում, վորի վորոշմամբ խմբակը լուծվում ե, միավոր անդամների մի մասը մտնում ե կուսակցության շարուրա անդամների մի մասը մտնում ե կուսակցության միության քերը, մասամբ ել ընդունվում մարքսիստական միության մեջ: «Ա. Խասհակյանը, — պատմում ե ընկ. Մելիքյանը, — ընդունակ տղաներից եր, մինչև հեղափոխությունը նա քիչ թե շատ ծանոթացել եր մեր գրականությանը, այնպէս վոր հեղափոխության ժամանակ և հետո արդեն հասունացած տղա յեր: Յերևանի գիմազիայում 1917 թ. աշնանը նա մի տղա յեր: Յերևանի գիմազիայում 1917 թ. աշնանը նա մի ըմբոստ դասադուլ ե կազմակերպում: Դասադուլային կոմիտեյում գործում կազմակերպում: Դասադուլային կոմի-

Ենի կողմէց գործուղղելով զիմազիայի վերատեսուչ Յեղանիյ Չողիշվիլու մոտ, պահանջում ե բանալիները»։ Դասդուլային կոմիտեն իր ձեռքն և առնում գլմազիայի զեկավարությունը։ Արգելում և մուտքը՝ ինչպես դասատուների, այնպես ել ծնողների համար։ Ստորին դասարաններում պարագմունքները վարում են բարձր դասարանների աշակերտները, իսկ վերջն դասարաններն զբաղվում են առորյա հարցերի շուրջը ուժիքատներ կարգադրով։ Դասդուլը ձգձգվում և — գործը հասնում և բանվորների, պյուղացիների և զինվորների խորհրդին, վորը վորոշում և անմիջապես դադարեցնել դասադուլը և շնոպաստել յերկրուող քառուին։ Եղանակերտները չեն զիջում. անցնում են բանակցություններին, ընտրվում ե հաշտարար կոմիտա, վորի վորոշումները պարագիր պետք և լինելին յերկու կողմերի համար, կոմիտայի վորոշումները ճշգող մեծամասնությամբ ընդունվում ե մանկավարժական խորհրդի կողմէց և հոկտեմբերի 25-ից դասադուլը վերջանում և — դպրոցը դասադուլային կոմիտեյի կողմէց հանձնվում և դպրոցի վարչությանը*։

1919 թ. մարտ ամսից միության բոյլերիկ համարվող յերկու ընկերների՝ Համբ Վարդանյանի և Ս. Յենգիրայանի խմբագրությամբ հրատարակվում ե «Յօնայ մայմլ» աշակերտական հանդեսը, վորը կուսակցական որդան չինելով հանդերձ, կատաղի հարձակումներ և անում դաշնակցական հաստատությունների հասցեյին, խարազանում հանրապետական կարգերը, կծու հոդվածներ զետեղելով մանավանդ լուսավորության մինիստրի գեմ։ «Յօնայ մայմլ»-ը կյանքի յեր կոչված, վորպես հակակիր «Յնայա ՌԿՕԼ» թերթին, վորն այդ ժամանակ արդեն բավականաշափ դաշնակցական գունավորում եր ստացել։ Հանդեսը մեծ հաջողություն ե ձեռք բերում, գրավում և բազմաթիվ ընթերցող-բաժանորդներ և տպագիր վիճակում լույս տեսնում ընդամենը յերեք համար։

* Յերեանի գիմազիայի 1917 թ. գործերը, Պետական արխիվի գործ № 3814.

ՍՊԱՐՏԱԿԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Յեղ այսպես, մարզսիստ աշակերտների միությունը կրում է ինտերֆերակցիոն բնույթ անգամ նրանից հետո, յերբ կուսակցական կազմակերպությունը պառակտվում ե։ Միության մեջ աշխատում են բոյլերիկները և մենշևիկները։ Նըանց միացման ողակն ե կազմում դաշնակցության դեմ մղված միասնական պայքարը։

«Սա գուցե ներկայիս տեսակետով սխալ ե, զրա մասին չենք վիճի, բայց սա պատմական փաստ ե, վոր վոչ վոք չի կարող հերքել։ Միության մեջ գտնվող բոյլերիկների յերիտասարդները կազմում եյին բացարձակ մեծամասնություն (մենշևիկներ եյին Ամասիա Հարությունյանը և Վահան Խերանյանը. Զ. Դ.), գործում եյին բոյլերիկյան կազմակերպության ղեկավարությամբ, կատարում եյին կուսակցական հանճնարարություններ, տանում եյին հեղափոխական աշխատանք։ Միության մեջ գտնվող մենշևիկները յերիտասարդներն ել գործում եյին մենշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ (և տանում հակահեղափոխական աշխատանք, կավելացնեյինք մենք)։ Իսկ միությունը, վորպես ամբողջություն, շարունակում եր տանելի իր պայքարը դաշնակցական յերիտասարդության դեմ և հոգում եր իր անդամների մարքսիստական պատրաստության մասին։ (Վ. Ծովյան. «Նորից անցյալի մասին» անտիպ հոդված, Յերիտպատի արխիվ)։

Սյդ դրությունը շարունակվում ե մինչև 1919 թվի սկզբները, յերբ Ղուկասը մեկնում ե Թիֆլիս — կապվում Սպարտակին, մասնակցում 1919 թվի սկզբներին գումարբաժանակին, միության մեջ Սպարտակի Թիֆլիսի կոնֆերանսին, վորտեղ «Յերիտպատարդ Սոցիալիստ ինտերնացիոնալիստների Սպարտակակազմակերպությունը» վերանվանվում ե «Յերիտասարդ կումունիստների Սպարտակ կազմակերպություն» և վորը հրապարակում ե մեր կողմից մեջ բերված գելլարատիվ կոչը։ Միայն Ղուկասի գալուց հետո հրավիրվում ե միության ընդհանուր ժողով, վորտեղ զեկուցում ե Ղուկասը և դնում միության վերակազմության հարցը։

ևՆա պնդում եր, վոր միությունը պետք է դուրս գա
 իր աշակերտական նեղ շրջանակներից, իր շարքերը
 քաշի յերիտասարդ բանվորներին և կանգնի զուտ քա-
 յալ թեղերին վոչ վոր չհակածառեց, բայց իսկույն հարց
 նական քաղաքական ուղղության մասին: Այստեղ եր,
 առաջարացաւ վիճաբանություններ: Ընկ: Դուկասն
 Այս անվան դեմ հակածառեց ընկ: Ամասիա Հարություն-
 յանը: Նա գտնում եր, վոր այդ անունը միությանը
 տալու յե զուտ կոմունիստական և բոյլշեիկյան բնույթ
 և ապա առաջադրելու յե միության պառուստման հարցը:
 Յես համաձայն եյի միության Սպարտակ անվան հետ,
 բայց պնդում եյի, վոր նա պետք է կրի Յերիտասարդ
 իմ համոզմամբ այդ անունը միություն անունը
 զուտ բոյլշեիկյան բնույթից: Յես այդ ժամանակ համոզ-
 նալ վոչ միայն բոյլշեիկները, այլև սոց-դեմոկրատ ին-
 տերնացիոնալիստները: Ամասիան չհամոզվեց. Ժողովի
 միությունից: («Նորից անցյալի մասին»):
 Մարքսիստական միության այդ ժողովում յերկար և
 տաք վիճաբանելոց հետո վորոշվում և միությունը վերա-
 կազմել և անվանել «Սոցիալիստ Յերիտասարդ Ինտերնա-
